

իրեն թագուհի կընէ Ռիվէրին, եւ անկէջ կճնանի սուլդան Մահմուտը: Արդ այս Ռիվէրի ըսուած տիկինը ազգական է եղեր այժմու նափուլէոն Կայսեր մեծ մօրը կամ մամուն՝ որ կըսուէր ժողէֆին տը - լա - փաթըրի:

Մեր լսածին նայելով՝ յիրաւի սուլդան Մահ-

մուտին մայրը օտարազգի է եղեր, բայց վրացի կամ հայ, եւ ոչ թէ Մարմինիկէէն կամ Դադղիայէն. սակայն փէի լրագրոյն պատմածն ալ կամօք յիշատակեցինք. թերեւս աւելի ստոյգ տեղեկութիւն մը ելնէ ըստ ժամանակին այս երկու կարծեաց մէկուն վրայ:

ՎԱԳԻԲԻ ՄԸ ՎԵՀԱՆՁՆՈՒԹԻՒՆԸ.

Փարիզու կենդանաբանական պարտիզին մէջ անհազին վագր մը կայ Ափրիկէի Սենեկալ ըսուած նահանգէն բերուած՝ խիստ կատաղի: Ասոր կերակուրը ոչ միայն հում միս է, հապա նաեւ ողջ ճագարներ (ատա թալշանը) ու հաւեր: Մօտերս վագրը իւր առջեւը ձգուած հաւերէն մէկուն խնայեր է՝ չէ դպած, եւ երկուքին մէջ այժմ մեծ

բարեկամութիւն մը ընկեր է. խեղճուկ հաւը համարձակ կ'վազվրուտէ վանդակին մէջ, կ'խաղայ վագրին հետ, ու նորա առջեւը նետուած կերակուրները կ'կրտցէ, եւ վագրը ամենեւին ձայն չհաներ:—Այն հաւուն որ հարցընես՝ անշուշտ կըսէ թէ վագրը շատ հեզ՝ շատ սիրուն ու շատ պատուական կենդանի է:

ՈՒՇ ԴԱՏԱՍՏԱՆ ԿՏՐԵԼՈՒՆ ՄԷԿ ՎՆԱՍՐ.

Հարաւային Ամերիկոյ Փերու նահանգին Լիմա քաղաքը՝ մօտերս երկու գող Անգղիացւոյ մը վրայ կ'վազեն: Անգղիացին գողերուն մէկը կ'զարնէ կ'մեղցընէ. միւսը կ'փախչի. Անգղիացին կ'վազէ ետեւէն, կ'բռնէ զնա եւ դատաւորաց ձեռքը կուտայ: Դատաւորները կ'գովեն Անգղիացւոյն քաջութիւնը, բայց գողին դատաստանը տեսնելու

մտքով՝ կ'առնուն Անգղիացին ալ առանձին բանտ մը կ'դնեն, եւ հոն կ'մոռնան զինքը: Վեց օրէն յետոյ ներս մտնեն տեսնեն որ խեղճ Անգղիացին մեռեր է. քովն ալ թղթի կտորի մը վրայ այս խօսքը գրեր թողուցեր է թէ «Կ'մեռնիմ քաղցածութենէ ու Փերուի կառավարութեան արդարութենէն»:

ՀԱՆՆԵԼՈՒԿ.

Ո՞վ կայ ի տան

Եւ ի բանտի,

Ի պալատան

Եւ ի դաշտի.

Ըզնա աղբիւր ունի Տըփիսիս,

Ըզնա աղբիւր գետըն Տիգրիս.

Նոյն աւարտումն է Եփրատի,

Եւ գլուխ եւ ծայրըն Տըզմուտի:

Օրագրոյս Սեպտեմբերի 15-ին Հանելուկն է ՀԱՆՆԵԼՈՒԿ: